

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԴԵՊՔԵՐԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

05.02.2019 19:54



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը **դիմել է** Երևանի քաղաքապետ Հայկ Մարուքյանին՝ առաջարկելով հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին բացառել փաստաբանների մասնակցությունը խոչընդոտելու դեպքերը:

Օրեր առաջ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը խոչընդոտել է **փաստաբան Նելլի Մովսիսյանի** մասնագիտական գործունեության իրականացմանը՝ արգելելով, որպես իր վստահորդի ներկայացուցիչ, մասնակցելու հանձնաժողովի նիստին:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը 29.01.2019թ. թիվ 25/01-Մ-788 գրությամբ այդ վարքագիծը պատճառաբանել է հետևյալ կերպ՝ «... երեխաների բնակության վայրը սահմանելու վերաբերյալ դատական գործերով հանձնաժողովի կողմից իրականացվող քննարկումներին հանձնաժողովը մասնակից է դարձնում երեխաների օրինական ներկայացուցիչներին՝ ծնողներին, այլ ոչ թե ծնողների լիազոր ներկայացուցիչներին»:

Փաստաբանների պալատի նախագահը՝ վկայակոչելով ՀՀ կառավարության 2016 թվականի հունիս 21-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 19-րդ կետի պահանջն առ այն, որ **հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք**, գտել է, որ Արաբկիրի վարչական շրջանի ղեկավարն այս նորմը մեկնաբանել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի (Նորմատիվ իրավական ակտում որոշ շահակապների և բառերի կիրառումը) պահանջներն անտեսելով, ինչի արդյունքում խախտել է քաղաքացու ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ խոչընդոտելով փաստաբանի մասնագիտական լիազորությունների իրականացմանը:

Փաստաբանների պալատը հիշեցրել է, որ նույն իրավիճակում, հիմք ընդունելով **Փաստաբանների պալատի գրությունը**՝ Երևանի քաղաքապետը 14.12.2015թ. թիվ 35/65010 գրությամբ **հանձնարարել է** Երևանի քաղաքապետարանի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նախագահներին խստորեն ապահովել օրենքների պահանջների կատարումը և չխոչընդոտել փաստաբանների գործունեությանը:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 05.02.2019թ. գրությունը

Առաջարկվող նորություններ

--	--	--



08.12.2015 ՀՀ
 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
 ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է
 ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ



17.12.2015 ԽՍՏՈՐԵՆ
 ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵԼ Է
 ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ
 ՇՐՋԱՆՆԵՐԻ
 ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ
 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
 ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ
 ՉԽՈՉԸՆԴՈՏԵԼ
 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ



12.02.2019 ԵՐԵՎԱՆԻ
 ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ
 ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է
 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
 ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })